

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	2
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)	4
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

*“Թեկ-Սեկ” ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբեր 2011 թ*

Անկախ աուդիտորի եզրակացություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի րությամբ	2009թ. դեկտեմբերի 31-ի րությամբ
Ակտիվներ				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4.1	11,460	5,171	4,517
Ոչ նյութական ակտիվներ	4.2	24,199	20,780	13,081
Ներդրումներ	4.8	1,135,500	-	-
Շահութահարկի գծով նվազագույն վճար		4,406	15,960	20,961
Տրված երկարաժամկետ փոխառություններ	4.4	5,450	-	-
Հետաձգված հարկային ակտիվներ	4.3	2,617	1,463	679
		1,183,632	43,374	39,238
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	4.5	83	439	188
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4.6	52,791	28,020	27,624
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	4.7	216	7,122	4,789
Տրված կարճաժամկետ փոխառություններ	4.4	270	-	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ		-	6,900	5,450
Այլ ընթացիկ ակտիվներ		-	775	235
Դրամական միջոցներ	4.9	294,776	151,867	86,768
		348,136	195,123	125,054
Ընդամենը ակտիվներ		1,531,768	238,497	164,292

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ` 30/03/2012

Տնօրեն

Գլխ. հաշվապահ

Արամ Ազատյան

Ելենա Մարյանյան

8-ից 36 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կանոնադրական կապիտալ		30,000	30,000	30,000
Կուտակված շահույթ/(վնաս)		7,402	(77,238)	(89,061)
	4.10	37,402	(47,238)	(59,061)
Ոչ Ընթացիկ պարտավորություններ				
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	4.11	1,000,459	17,036	39,258
		981,459	17,036	39,258
Ընթացիկ պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4.12	478,593	27,751	8,827
Կարճաժամկետ փոխառություններ հիմնադիրներից		-	5,000	-
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր սոց. վճարի գծով		1,658	290	22
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին		564	-	-
Աշխատավարձի և սոց վճարի գծով պահուստներ	4.3	13,092	7,320	3,397
Գործընկեր. կազմ. օգտին հավաքագրված գումարներ		499,815	228,338	171,849
		512,907	268,699	184,095
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		1,531,768	238,497	164,292

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ` 30/03/2012

Տնօրեն

Գլխ. հաշվապահ

Արամ Ազատյան

Ելենա Մարյանյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազ. դրամ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ծառայությունների մատուցումից հասույթ	337,208	228,030
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից հասույթ	-	1,525
Ներված պարտավորություն	5,616	-
Տոկոսային եկամուտներ	182	100
Միջնորդական ծառայությունից եկամուտներ	208	-
	343,214	229,655
Տերմինալների տեղ. և սպասարկման ծախսեր	(62,348)	(57,652)
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	(65,698)	(43,300)
Աշխատավարձի և սոց. վճարների գծով պահուստներ	(5,772)	(3,923)
Նյութածախս	(2,478)	(4,035)
Վճարումների ընդունման ապահովման ծախսեր	(6,300)	(1,546)
Ինֆորմացիոն բազաների տրամադրման ծախսեր	(3,305)	-
Վարձակալան վճարներ	(50,006)	(48,806)
Հիմնական միջոցի մաշվածություն	(5,313)	(2,910)
Ինկասացիոն ծախսեր	(12,960)	(9,081)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	(9,434)	(7,860)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(3,194)	(1,795)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(2,220)	(500)
Չփոխհատուցվող հարկերի և այլ պարտադիր վճարներիի գծով ծախսեր	(8,991)	(5,862)
Իրացման այլ ծախսեր	(1,781)	(3,736)
Վարկերի և փոխառությունների գծով ծախսեր	(2,341)	(3 058)
Վարչական այլ ծախսեր	(9,999)	(7,310)
Ներկայացուցչական ծախսեր	-	(7,278)
	(252,140)	(208652)
Գործառնական շահույթ/վնաս	91,074	21,003
Ֆինանսական ծախսեր	(9,654)	(3,789)
Այլ ֆինանսական արդյունքներ	21,583	(1,173)
շահույթ/(վնաս) նախքան հարկումը	103,003	16,041
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(18,116)	(4,218)
Տարվա շահույթ/(վնաս)	84,887	11,823
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	(247)	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	84,640	11,823

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ` 30/03/2012

Տնօրեն
Արամ Ազատյան

Գլխ. հաշվապահ
Ելենա Մարյանյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը կազմված է ծախսերի բնույթի մեթոդով, ուստի լրացուցիչ տեղեկատվության բացահայտման կարիք չի առաջանում:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազ. դրամ	Ծանոթ.	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
2010թ. հունվարի 1-ի դրությամբ		30,000	(89,061)	(59,061)
Տարվա շահույթ/(վնաս)			11,823	11,823
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		30,000	(77,238)	(47,238)
Կանոնադրական կապիտալի աճ (նվազում)			(247)	(247)
Տարվա շահույթ/(վնաս)			84,887	84,887
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4.10	30,000	7,402	37,402

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ` 30/03/2012

Տնօրեն

Գլխ. հաշվապահ

Արամ Ազատյան

Ելենա Մարյանյան

8-ից 36 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազ. դրամ	2011	2010
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	316,572	229,931
Արտադրանքի, ապրանքների, ծառայությունների իրացումից	312,598	228,041
Գործառնական այլ գործունեությունից	3,974	1,890
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	(254,780)	(206,281)
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	(2,084)	(49,308)
Ծճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(56,147)	(36,831)
Ստացված ծառայությունների դիմաց վճարումներ	(174,227)	(100,716)
Հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարներ	(20,139)	(17,630)
Գործառնական այլ գործունեությունից	(2,183)	(1,796)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	61,792	23,650
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	12,430	1,525
Փոխառությունների տրամադրումից	12,430	-
ՀՄ-ների և ՈՆԱ-ների վաճառքներից	-	1,525
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	(984,157)	(700)
ՀՄ-ների և ՈՆԱ-ների ձեռք բերման գծով	(8,518)	(500)
Փոխառությունների տրամադրումից	(11,250)	(200)
Ներդրումային այլ գործունեությունից ելքեր	(964,389)	
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(971,727)	825
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	13,699,051	8,512,795
Ստացված վարկերից և փոխառություններից	983,200	4,050
		8,508,74
Այլ	12,715,851	5
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր	(12,646,192)	(8,473,275)
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	(5,005)	(22,422)
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	(2,341)	(1,458)
Այլ	(12,638,849)	(8,449,395)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	1,052,859	39,520
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	142,924	63,995
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	151,866	86,768
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(15)	1,103
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու տարվա վերջին	294,776	151,866

8-ից 36 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

“Թել-Սել” ՓԲԸ Ընկերությունն հիմնադրվել է 31/05/2007թ

Ընկերությունը գործունեություն է իրականացնում ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից 2007թ-ի հուլիսի 24-ին ՀՀ ԿԲ թիվ 230 որոշմամբ տրված “Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլինինգ իրականացնելու” թիվ 2 և թիվ 229 որոշմամբ՝ “Դրամային (փողային) փոխանցումներ իրականացնելու” թիվ 5 լիցենզիաների հիման վրա:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 38 հոգի:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության մասնակիցներն են հանդիսանում

1. Տաթևիկ Ավետիսյան	22.5%
2. Արամ Սարգսյան	42.5%
3. Եվգենի Տրեյստեր	35%

2011թ-ի դեկտեմբերի 14-ին 100% բաժնեմասերի առք ու վաճառքի պայմանագրով “Թել-Սել” ՓԲԸ-ն ձեռք է բերել “Մեզա Պանտերա” ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասեր:

2011 թ. դեկտեմբերի 14-ին Ընկերության կողմից ձեռք բերված "Մեզա Պանտերա" ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասերը արտացոլված են իրենց անվանական արժեքով "Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ" հաշվում , իսկ անվանական և ձեռքբերման արժեքների տարբերության մասով " Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ" հաշվում:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13:

1.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը

տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

Համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված դեռևս առկա են անորոշություններ ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի առումով, ինչը կարող է հանգեցնել արտերկրից ոչ առևտրային դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, դեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա: Հետևաբար, Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ճշգրտվել դրանց հնարավոր ազդեցությամբ:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վարվող հաշվապահական հաշվառման գրանցումների և Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Վերադասակարգում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.6 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար համապատասխան և 2011թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանի համար կիրառելի նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի («ՀՀՄՍԽ») և ՀՀՄՍԽ-ի Հաշվետվությունների Մեկնաբանման Հանձնաժողովի («ՀՄՀ») կողմից: Միակ փոփոխությունը, որ ազդեցություն է ունեցել ֆինանսական հաշվետվությունների վրա, ՖՀՄՍ 2010թ. բարեփոխումներից ՖՀՄՍ 7-ի փոփոխությունների ընդունումն է, որը ներկայացված է ստորև:

ՖՀՄՍ 7 (Փոփոխություն) Ֆինանսական գործիքներ.

Բացահայտումներ Փոփոխությունը պարզաբանում է ֆինանսական գործիքների բացահայտման պահանջները՝ վերացնելով անհամապատասխանությունները և կրկնվող բացահայտումները: Մասնավորապես, վերացվում են բացահայտման ենթակա հետևյալ պահանջները.

- ֆինանսական ակտիվների մնացորդային արժեքները, որոնց պայմանները վերանայվել են և որոնք այլապես կլինեին ժամկետանց կամ արժեզրկված,
- պարտքային ռիսկի առավելագույն չափը ֆինանսական այն գործիքների համար, որոնց հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց՝ պարտքային ռիսկի ենթարկվածության առավելագույն չափը,
- Ժամկետանց կամ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով պահվող գրավների իրական արժեքի գնահատումը և նկարագրությունը:

Այս փոփոխությունն ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

2.7 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և փոփոխություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում: Ընկերության ֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի նոր ստանդարտների, փոփոխությունների ու մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև:

ՖՀՄՄ 7 (փոփոխություններ) Ֆինանսական ակտիվների փոխանցում

Փոփոխության նպատակն է օգնել ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին գնահատելու ֆինանսական ակտիվների գծով բարդ փոխանցումների ռիսկայնությունը և այս ռիսկերի ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի վրա: Պահանջվող լրացուցիչ բացահայտումները նախատեսված են տեղեկատվության տրամադրման համար, որոնք թույլ են տալիս օգտագործողներին՝

- Հասկանալ ոչ ամբողջապես ապահանջվող փոխանցված ֆինանսական ակտիվի և դրա հետ կապված պարտավորության միջև հարաբերությունը, իրավունքը պետք է առկա լինի բոլոր կողմերի համար:

- Քանի որ գործնականում ՀՀՄՍ 32-ում առկա «միաժամանակյա մարման» մեկնաբանության գործնական կիրառման մեջ առկա էր բազմազանություն, ուստի ՀՀՄՍԽ-ն պարզաբանեց զուտ մարման սկզբունքը և ներառեց համախառն մարման համակարգի օրինակ՝ ՀՀՄՍ 32-ի զուտ մարման չափանիշին բավարարող բնութագրիչներով:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2014թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և ենթական են հետընթաց կիրառման:

ՖՀՄՍ 7 (փոփոխություն) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Փոփոխությունը հավելում է ՖՀՄՍ 7-ի որակական և քանակական բացահայտումներ կապված ճանաչված ֆինանսական գործիքների զուտ և համախառն գումարների հետ, որոնք

ա) հաշվանցվել են ֆինանսական վիճակի հաշվետվության մեջ,

բ) ենթակա են կատարման հիմնական հաշվանցման պայմանավորվածության կամ նմանատիպ համաձայնագրերի ներքո, եթե նույնիսկ հաշվանցված չեն ֆինանսական վիճակի հաշվետվության մեջ:

Փոփոխությունները կիրառելի են 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և ենթակա են հետընթաց կիրառման:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ

ՀՀՄՍԽ-ն նպատակ ունի փոխարինել ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը», ամբողջապես: Փոխարինող ստանդարտը (ՖՀՄՍ 9) թողարկվում է փուլերով:

Մինչ այսօր, լույս են տեսել ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման, դասակարգման, չափման և ապաճանաչման գլուխները: Արժեզրկման մեթոդոլոգիայի և հեջավորման հաշվառման հետ կապված գլուխները դեռ մշակման փուլում են:

ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՖՀՄՍ 9-ի փոփոխություն, որով ՖՀՄՍ-ի կիրառման պարտադիր ժամկետը հետաձգվել է 2013թ-ի հունվարի 1-ից մինչև 2015թ.-ի հունվարի 1-ը: Սա նշանակում է, որ ՀՀՄՍ 39-ի փոխարինման ծրագրի բոլոր փուլերը այժմ կունենան միևնույն պարտադիր կիրառման ժամկետը: Փոփոխությունները նաև ազատում են համեմատական ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացման պահանջից ՖՀՄՍ 9-ի կիրառման համար: Այս ազատումը նախկինում հասանելի էր միայն այն ընկերություններին, որոնք նախընտրում են կիրառել ՖՀՄՍ 9-ը մինչև 2012թ.: Այժմ կպահանջվեն նաև հավելյալ անցումային բացահայտումներ՝ ստանդարտի առաիջֆ անգամ կիրառման ընկալմանն օժանդակելու համար:

Ղեկավարությունը դեռ պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը
Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՄ 13 Իրական արժեքի չափումը

ՖՀՄՄ 13-ը չի ազդում նրա վրա, թե որ ակտիվները պետք է չափվեն իրական
արժեքով, սակայն հստակեցնում է իրական արժեքի սահմանումը և տրամադրում է
իրական արժեքի չափման վերաբերյալ ուղեցույց և ընդլայնված բացահայտումներ: Այն
ուժի մեջ կմտնի 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան
ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը դեռ պետք է գնահատի
այս նոր ստանդարտի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՄ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

ՀՀՄՄ 1-ի փոփոխությունները պահանջում են կազմակերպությանը այլ
համապարփակ եկամուտներում ներկայացված տարրերը խմբավորել այնպիսի խմբերի,
որոնք մնացած ՖՀՄՄ-ների համաձայն.

ա) հետագայում չեն վերադասակարգվելու շահույթի կամ վնասի և

բ) հետագայում վերադասակարգվելու են շահույթի կամ վնասի, երբ առաջանան որոշակի
պայմաններ:

Այն ուժի մեջ կմտնի 2012թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող
տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը ակնկալում է,
որ սա կփոխի այլ համապարփակ եկամուտների տարրերի ընթացիկ ներկայացումը,
սակայն չի ազդի դրանց չափման և ճանաչման վրա:

3 Դաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական
հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական
քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար
գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները
գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը.

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2011թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	385.77
ՀՀ դրամ/1 Եվրո	498.72
ՀՀ դրամ/1 Ռուբլի	11.98

Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքներում:

3.2 Շահութահարկ

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուղվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում Ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.3 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են դրամարկղում առկա կանխիկ դրամից, ՀՀ առևտրային բանկերում պահվող միջոցներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի, ինչպես նաև վճարումներ ընդունող տերմինալներում և պայմանագրային հիմունքներով դրամ հավաքագրող գործընկերների մոտ:

3.4 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն – Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված

բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

3.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ:

Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)
Տրանսպորտային միջոցներ	10
Համակարգչային տեխնիկա	1
Տնտեսական գույք	5
Այլ հիմնական միջոցներ	5

3.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, ֆիրմային անուններից և լիցենզիաներից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության՝ համապատասխան ժամկետում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ: (Համակարգչային ծրագրերի մշակման գծով ծախսերը (օրինակ դիզայն և նոր կամ նորացված ծրագրի թեստավորում) ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, երբ Ընկերությունը կարողանում է ցուցադրել ոչ նյութական ակտիվի ստեղծման տեխնիկական հնարավորությունն այնպես, որ այն հնարավոր լինի վաճառքի կամ օգտագործման, իր մտադրությունը ստեղծելու ոչ նյութական ակտիվ և այն օգտագործելու կամ վաճառելու, իր ունակությունը օգտագործելու կամ վաճառելու ոչ նյութական ակտիվը, այն, թե ինչպես է ոչ նյութական

ակտիվը ստեղծելու հնարավոր տնտեսական օգուտներ, աշխատանքներն ավարտելու բավարար միջոցների առկայություն և դրանց հստակ գնահատում: Ծրագրային ապահովման գծով այլ ծախսերը ճանաչվում են դրանց ծագման պահին:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)
Համակարգչային ծրագրեր	10
Լիցենզիաներ	1
Ֆիրմային անուններ	10

3.7 Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները դասակարգվում են վաճառքի համար պահվող, երբ հաշվեկշռային արժեքը ենթակա է փոխհատուցման ոչ թե դրանց հետագա շահագործման, այլ վաճառքի միջոցով: Դրանց վաճառքը ենթադրվում է իրականացնել վաճառքի համար պահվող դասակարգումից հետո մեկ տարվա ընթացքում:

Վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները ճանաչվում են հաշվեկշռային արժեքի կամ իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսերը, նվազագույնով: Եթե վերջինս ավելի փոքր է, քան հաշվեկշռային արժեքը, ապա ճանաչվում է արժեզրկումից կորուստ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքի՝ հանած վաճառքից ծախսերը, հետագա ցանկացած աճ ճանաչվում է միայն տվյալ ակտիվի նախկինում արժեզրկված գումարների չափով:

3.8 Կենսաթոշակներ

Ընկերությունում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված համակարգին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են: Բացի այդ, Կազմկերպությունը չունի կենսաթոշակային այլ վճարներ և հաշվեզրում պահանջող այլ նշանակալի փոխհատուցվող վճարներ:

3.9 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

3.10 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և/կամ դրա արժեքի աճի նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով:

Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն առաջացել է:

3.11 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.12 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապահանջվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասերը պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեքը կման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

I. ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ

Ֆինանսական ակտիվներ, որոնք սկզբնապես ճանաչման պահին դասակարգվել են որպես ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ ուղղակիորեն ճանաչելով իրական արժեքի փոփոխությունները սեփական կապիտալում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ, երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե համապատասխան աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ի լրումն՝ ֆինանսական ակտիվը չափվում է գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքով, եթե առկա է ներդրումների արժեզրկման օբյեկտիվ ապացույց: Ներդրման հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

IV. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում: Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

V. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդներ դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ և դրամական միջոցներ ճանապարհին, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվների «վարկեր և դեբիտորական պարտքեր» կատեգորիայում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.13 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես

եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

3.14 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.15 Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.16 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական գեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարը, գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

- Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը,
- Ընկերությունը չի պահպանում կառավարման այն չափի մասնակցություն, որը բխում է սեփականության իրավունքից և վաճառված ապրանքների նկատմամբ վերահսկողություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը:

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը:

Վարձակալական եկամուտ

Ներդրումային գույքից վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

3.17 Կառուցման պայմանագրեր

Պայմանագրից հասույթը ներառում է պայմանագրով համաձայնեցված նախնական գումարը՝ գումարած պայմանագրային աշխատանքներում փոփոխությունները, վնասի փոխհատուցումները և խրախուսիչ վճարները՝ այնքանով, որքանով հավանական է, որ դրանք հանգեցնեն հասույթի, և գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել: Երբ կառուցման պայմանագրի արդյունքը հնարավոր է

արժանահավատորեն չափել, ապա պայմանագրից հասույթը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ պայմանագրի ավարտվածության աստիճանի հիման վրա: Պայմանագրի գծով ծախսերը ճանաչվում են կատարմանը զուգընթաց, բացառությամբ այն դեպքի, երբ դրանք առաջացնում են ապագա պայմանագրային գործունեության գծով ակտիվ: Ավարտվածության աստիճանը որոշվում է՝ հիմնվելով փաստացի կատարված աշխատանքների վրա: Երբ կառուցման պայմանագրի գծով արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, ապա պայմանագրից հասույթը ճանաչվում է փաստացի ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն: Պայմանագրից ակնկալվող վնասն ուղղակիորեն ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.18 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով, իսկ շուկայական պայմաններից էականորեն տարբերվող գներով կատարված գործարքների բացահայտումը լրացուցիչ ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից բացահայտումներ բաժնում: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Հարկային օրենսդրություն

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով և լրացումներով:

Վերջիններս երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ:

Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Հաճախ հարկային մարմինները ներկայացնում են պահանջներ այնպիսի գործարքների կամ հաշվառման մեթոդների նկատմամբ, որոնց նկատմամբ նախկինում դիտողություններ չեն եղել: Դրա հետևանքով կարող են առաջանալ լրացուցիչ տույժեր և տուգանքներ:

Հարկային ստուգումները կարող են ընդգրկել հաշվետու տարվան անմիջապես նախորդող 3 տարի ժամանակաշրջան, սակայն որոշ պայմաններում ստուգումները կարող են ընդգրկել ավելի վաղ ժամանակաշրջաններ:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

4. Բացահայտումներ

4.1 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգչային տեխնիկա	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Այլ	Ընդամենը
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,533	-	4,616	890	14,039
Ավելացում	5,735	4,000	682	-	10,417
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,268	4,000	5,298	890	24,456
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>					
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(8,022)	-	(2,407)	(339)	(10,768)
Տարվա ծախս	(1,302)	-	(836)	(90)	(2,228)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(9,324)	-	(3,243)	(429)	(12,996)
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,944	4,000	2,055	461	11,460

4.2 Ոչ Նյութական արժեքներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագիր	Ֆիրմային անուններ	Լիցենզիա	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,425	567	788	20,780
Ավելացում	6,503	-	-	6,503
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,928	567	788	27,283
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>				
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ծախս	(2,592)	-	(492)	(3,084)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(2,592)	-	(492)	(3,084)
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,336	567	296	24,199

4.3 Հետաձգված հարկային ակտիվ

Հետաձգված հարկային ակտիվն առաջացել է միայն չօգտագործված արձակուրդների պահուստաֆոնդի ձևավորման արդյունքում:

Հազար դրամ

առ 31 դեկտեմբեր 2011

Չօգտագործված արձակուրդ

Մնացորդը տարեսկզբին	6,482
ավելացում (պակասեցում)	5,163
Մնացորդը տարեվերջում	11,645

Պահուստ սոց. վճարի գծով

Մնացորդը տարեսկզբին	838
ավելացում (պակասեցում)	609
Մնացորդը տարեվերջում	1,447

Հետաձգված հարկային ակտիվ

Մնացորդը տարեսկզբին	838
ավելացում (պակասեցում)	609
Մնացորդը տարեվերջում	1,447

4.4 Տրված երկարաժամկետ և կարճաժամկետ փոխառություններ

Հազար դրամ	առ 31 դեկտեմբեր 2011
Երկարաժամկետ փոխառություն	5,450
Կարճաժամկետ փոխառություն	270
Ընդամենը	5,720

2011 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունն ունի տրված անտոկոս փոխառություններ աշխատակիցներին, որից 5,450 հազ. դրամի չափով երկարաժամկետ՝ մինչև 2014 թ-ի դեկտեմբերի 31-ը և 270 հազ. դրամի չափով կարճաժամկետ:

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին :

Իրացվելիության և Հայաստանի շուկայում հրապարակված «տոկոսադրույքի հայտանիշների» բացակայության, ինչպես նաև այն փաստի, որ նշված գործարքներն իրականացվել են կապակցված կողմերի հետ և առանձնահատուկ բնույթի են՝ իրատեսական չէ որոշել կապակցված կողմերից տրված փոխառությունների իրական արժեքները:

4.5 Պաշարներ

Հազար դրամ	առ 31 դեկտեմբեր 2011
Նյութեր	5
Արագամաշ առարկաներ	78
Ընդամենը	83

4.6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	առ 31 դեկտեմբեր 2011
Առևտրային դեբիտորական պարտքեր	42,221
Տրված կանխավճարներ	1,782
Դեբիտորական պարտքեր առհաշիվ գումարների գծով	6,840
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի գծով	1,948
Ընդամենը	52,791

4.7 Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով

Հազար դրամ	առ 31 դեկտեմբեր 2011
Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով	98
Դեբիտորական պարտքեր ԱԱՀ-ի գծով	118
Ընդամենը	216

4.8 Ներդրումներ

Հազար դրամ	առ 31 դեկտեմբեր 2011
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	1,059,450
Սկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ կապակցված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում	76,050
Ընդամենը	1,135,500

4.9 Դրամական միջոցներ

Հազար դրամ	առ 31 դեկտեմբեր 2011
Ազգային արժույթի դրամարկո	18
Հաշվարկային հաշիվներ բանկերում	83,142
Արտարժութային հաշիվներ բանկերում	48
Դրամական միջոցների համարժեքներ	211,568
ԸՆդամենը	294,776

Արտարժութային հաշիվներում առկա մնացորդը ներկայացված է ՀՀ դրամով, վերագնահատված ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից համապատասխանաբար 30.12.2011 թ–ին սահմանված միջին փոխարժեքով:

4.10 ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Հազար դրամ	առ 31 դեկտեմբեր 2011
Սկզբնական մնացորդ	(77,238)
Ընթացիկ տարվա շահույթ (վնաս)	84,640
ԸՆդամենը կուտակված շահույթ (վնաս)	7,402

4.11 Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ

Ընկերությունը մինչև 2011թ դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ստացել է հետևյալ բանկային վարկեր և փոխառություններ.

- 2007թ հուլիսին Ընկերության հիմնադիրների կողմից ստացել է անտոկոս փոխառություն : Տրամադրված ընդհանուր գումարը կազմել է 172 585 000/մեկ հրյուր յոթանասուններկու միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար/ ՀՀ դրամ: 2008թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից մարվել էր 155 551 000 /մեկ հարյուր հիսունհինգ միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար/ ՀՀ դրամ: 2011թ դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված փոխառության մնացորդը կազմում է 17 034 000 /տասնյոթ միլիոն երեսունչորս հազար /ՀՀ դրամ:
- 2008 թ. Օգոստոսի 13-ին Ընկերության և “Յունիբանկ” ՓԲԸ-ի միջև կնքվեց Վերականգնվող Վարկային Գծի Պայմանագիր թիվ 037-Ի 40 000 000/քառասուն միլիոն / ՀՀ դրամ արժեքով, երեք տարի ժամկետով և 18 տոկոս տարեկան տոկոսադրույքով:
- 2011 թ. Հուլիսի 01-ին “Թել-Սել Սերվիս” ՍՊԸ-ն Ընկերությանը տրամադրեց 19000000 /տասնինը միլիոն/ ՀՀ դրամի, յոթ տարի ժամկետով և 11 տոկոս տարեկան տոկոսադրույքով փոխառություն:
- 2008 թ. Դեկտեմբերի 13-ին Ընկերության և “ՖԻՆԱՍԲԱՆԿ” ՓԲԸ-ի միջև կնքվեց Վարկային Պայմանագիր թիվ 015/Կ-11 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար / ԱՄՆ դոլլար արժեքով, երեք տարի ժամկետով և 10.5 տոկոս տարեկան տոկոսադրույքով:

Հազար դրամ	2011
Բանկային վարկ	964,425
Փոխառություն	36,034
Ընդամենը	1,000,459

4.12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	առ 31 դեկտեմբեր 2011
Առևտրային կրեդիտորական պարտքեր	182,705
Ստացված կանխավճարներ	10,613
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով Սխալ վճարումներից առաջացած պարտավորություն	4,335
Գործընկերների օգտին հավաքագրված գումարներ	5,653
ԸՆդամենը	275,287
	478,593

4.13 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերության կապակցված կողմն է՝ “Թել-Սել Սերվիս” ՍՊԸ-ն, որը ունի նույն հիմնադիրները: “Թել-Սել Սերվիս” ՍՊԸ-ից Ընկերությունը վարձակալում է ինքնասպասարկման վճարային սարքավորումներ:

Տնօրեն

Գլխ. հաշվապահ

Արամ Ազատյան

Ելենա Մարյանյան